ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 226- Ա 11 հունիսի 2020 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ, ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 50-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական, ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1831-Ա որոշումը

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված միացման պայմանագիրը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվեկշիռները՝ 2020 թվականի փետրվարի 3-ի դրությամբ:

3) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր /ներառյալ՝ վիճարկվող/ պարտավորությունների «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված N 2-ի:

4) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները՝

ա. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով պետական գրանցումից հետո, հնգօրյա ժամկետում, միացվող կազմակերպության կողմից կազմված և կազմակերպության հիմնադիր հանդիսացող պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի, որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանձնում է, իսկ միացման ձևով ընդլայնված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ընդունում է միացվող կազմակերպության առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվարկները: Հանձնում ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա են հաստատման Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի կողմից.

բ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպված են համարվում

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 7-ի ««Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքված միացման պայմանագիրը, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը, գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունները «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտերը հաստատելու մասին» N 50-Ա որոշումը:

ՄԱՐԶՊԵՏ

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ